

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Տիկին Վստփառեայ Քանանեան, յազազ իրազօրծման կտակին, որ յանուն հանգուցեալ առն իւրոյ. թ. 1748:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն պ. Նիկողայոսի մահաւ. Գուրգուլեան Նախիջևանցեայ, յազազս նուիրարեութեան նորա մատենադարանի Հոգ. ձեմարանի Մայր Աթոռոյ ի յիշատակ հանգուցեալ հօր իւրոյ. թ. 1452:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն պ. Մովսիսի Թաւրիզեանց Ասարախանցեայ, յազազս նուիրարեութեան նորա զմի տոմս խաղարկութեան Ա. կարգի յանուն Հոգ. ձեմարանի Մ. Աթոռոյ. թ. 1958:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Նուշեցի պ. Իսահակայ Թաղէսեան, յազազս երկարամեայ պաշտօնավարութեան նորա իրեւ հոգարարձու և նուիրատու թեմական դպրանոցի տեղւոյն. թ. 1964:

— Օրհնութեան և քաջաբերութեան յանուն պ. Սարգսի Իւզրաշեանց Նուշեցեայ, որով հրաւիրեցաւ ի պաշտօն Հոգարարձութեան դպրանոցին Նուշեայ. թ. 1965:

— Շնորհաւորական յանուն երկից միաբանից Կիլիկիոյ Գեր. Տ. Մկրտիչ Եպիսկոպոսի Վեհապետեան, Աբրահամ Եպիսկոպոսի Մամիկոնեան և Բարեշն. Ներսէս վարդապետի Դանիէլեան, որ ի Կ. Պոլիս, յազազս բարեկաւքով ընտրութեան Կաթողիկոսի Տանն Կիլիկիոյ յանձին Գեր. Տ. Դէորդ Եպիսկոպոսի երկեան. թ. 1991:

ԿՐՕՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԻՍԿՈՒԹԻՒՆԸ

Գ.

Ի՞նչ է Կառգել Քրիստոս.

Ի՞նչ քարոզութիւնը սկսեց Փրկիչն այն կէտից, ուր կանգ էր առել Յովհաննէս

Մկրտիչը: Երբ նա հրապարակ ելաւ, ամիսներ առաջ Յորդանանի ափերին մի մեծ շարժում էր սկսուել. հրեայ ժողովուրդը գունտադունտ այնտեղ էր գիմնւմ. նոր մարգարէի քարոզը լսելու: Նորա լսածը նոր բան չէր. «Աստուծոյ արքայութիւնը մօտեցել է» — քանի քանի մարգարէներ այդպէս ասել, անցել դնացել էին, և խոստացուած արքայութիւնը չկար ու չկար. մնախաներ նոյն իսկ յայտնուել էին վերջին ժամանակ, որոնք արդէն եկած էին համարում արքայութիւնը և իրենք իրեւ բերողը ներկայանում: Բայց մինչ դարաւոր ստրկութեան շղթաների տակ հեծող խեղճ մոլեռանգ ժողովուրդը սպասում էր, թէ ահա նորա երկնքից զօրքեր կիջեցնեն, մի ակնթարթում կ'ստորտակեն տիեզերաստան Հռոմի զօրութիւնը, Սիւնի բարձունքի վերայ Դաւթի գահը կ'հաստատեն, և Իսրայէլի հին փառքը հազարապատիկ աւելի պերճութեամբ կ'վերականգնի, շուրջն ամբողջ երկիրը կ'ծաղկի, մեղր ու կաթ կըղխէ, երանութեան հովիտ կ'գառնայ Աբրահամի որդւոց համար՝ հռոմայեցի զինուորները գալիս էին, նիզակի ծայր հանում կամ դէպի բանա ու կախաղան տանում կարծեցեալ ողորմելի մեծիւններին, ու ոսկի երազները յօդս էին ցնդում: Եւ սակայն զուր տեղը չէր այդ ժողովուրդը բուռն փափագով Յովհաննէսի շուրջը խմբուում. այո՛, նա հին քարոզն էր կրկնում, բայց որչափ տարբեր ոգւով ու եղանակաւ, քան միւս իւր ժամանակի բազմապիսի քարոզիչները: Նորա արտաքին երեւոյթն ևս վկայում էր, որ նա տարբեր մարդ էր. առաջին մեծ մարգարէի՝ Եղիայի, նման անապատում էր նա ապրում և անապատից ստանում իւր սնունդն ու հագուստը. մարդկային հասարակութիւնից ոչ մի սպասելիք չունէր՝ չէր էլ կամենում որեւէ բանով պարտական մնալ սորան: Իսկ երբ ելնում էր մարդոց առաջ և բաց էր անում բերանը երկնաւոր թաղաւորի պատգամները յայտնելու համար՝ ծանր մուրճի հարուածների պէս էին ընկնում նորա խօսքերը ունկնդիրների կրծքի վերայ, ինչպէս կրակ այրում

առարկում նոցա ներսը, և նորա զգում էին, որ մի ճշմարիտ մարդարէ է խօսում իրենց հետ՝ մի մարդարէ հոգւով և զօրութեամբ և յղիայի, հին Իսրայէլի այն խկապէս աստուածախօս մարդարէներից մէկը։ Զարթել էր մարդարէութիւնը, հետեւաբար հետէր կարող լինել նաև Իսրայէլի Աստուծոյ այցելութիւնը իւր ժողովուրդին։ Եւ Յովհաննէս քարոզում էր, որ հետեւ չէ, այդ քարոզելու համար իսկ նա ասողարէդ էր եկել։ Բայց հարկաւոր էր փոքր ինչ խոր թափանցել նորա խօսքերի մէջ, որպէս զի իւրաքանչիւր հրեայ հասկանար, որ իւր փափաղների լրումը չէին խօստանում դժբա ամենեկին։ Մօտեցել է այն, ասում էր նոր մարդարէն, երկնքի արքայութիւնը, սակայն ում համար, ձեզ՝ Արքահամի որդւոցդ համար, կարծում էք, եթէ այդպէս լինէր, եթէ «Արքահամի որդի» անունը միայն բաւական լինէր երկնային բարիքը ժառանգելու՝ Աստուած քարերը Արքահամի որդիք կգարձէր, ու դարերով սպասել չէր տայ իւր ոգոսմութեանը։ Արքահամի ճշմարիտ որդիք լինելու համար Արքահամի հաւատն ու արդարութիւնը ունենալ պէտք է. ուստի ապաշխարեցէք, թողէք ձեր չար բարքն ու անիրաւութիւնները, բարիք գործեցէք իւրաքանչիւրն իւր կոչման, իւր հասարակական դրութեան սահմաններում։ Դատաւտանով է սկսում Աստուած իւր թաղաւորութիւնը, և ամէն ծառ, որ բարի պտուղ բերել չի կարող՝ պէտք է կտրուի ու կրակը ձգուի։

Ապաշխարեցէք, երկնքի արքայութիւնը մօտեցել է, — այս էր նաև Փրկչի առաջին քարոզը։ Բայց այդ քարոզը Յովհաննէսի բերանում միայն մարդարէութիւն էր՝ ամփոփումն մինչև նորա ժամանակ եղած բոլոր մարդարէութիւնների, ներկայի դատաւարարութիւն և ցուցումն դէպի մի լուսաւոր ապագայ. Քրիստոսի բերանում աւետիք էր՝ արդէն ներկայ մի նոր կեանքի յայտնագործութիւն, որ նա ինքն իւր հետ բերել էր և որի մասին կանանց ծնունդներից ամենամեծն անգամ շատ աղօթ գաղափար ունէր։ Ինչ էր նորը Փրկչի յայտնութեան

մէջ, — կարելի է ասել, «քրիստոնէութեան խկութիւնն» ըմբռնելու համար ամենակարեւոր հարցն է այդ. նա հանգէս չէ եկել իրեւ մի բոլորովին նոր կրօնի հիմնադիր, ուրիշ սուտ կրօնների սուտ հիմնադիրների նման իրենից առաջ եկողներին սուտ չի հանել և, անցեալի ժառանգութիւնը տախտակայ անելով՝ նորա աւերակների վերայ իւր նոր չէնքը կառուցել, այլ խօսել է հայրերի՝ Աբրահամի, Իսահակի, Յակոբի Աստուծոյ անունով, Յովհաննէս Մկրտչից մկրտութիւն ու վկայութիւն ընդունելով և ամենափառաւոր վկայութիւնը տալով նորա մասին՝ կապել է անմիջապէս իւր գործունէութիւնը նորա գործունէութեան հետ, և այդպիսով հին ուխտի «առկայծեալ պատրոյգը» փառել, աշխարհը լուսաւորող մի ճրագ է դարձրել։ Այնուամենայնիւ ուղիղ հասկացուած պատմութիւնն ասում է, որ նա միայն իսկական մարդ նորութիւն է բերել այս հին աշխարհը, որ նորա քարոզած աւետարանը՝ թէպէտ խաղաղութեան և սիրոյ աւետարան, ամենամեծ յեղափոխութիւնն է ձգել կեանքի մէջ, իրերի ընթացքն ու արժէքը փոխել՝ արժէքաւորն անարժէք ու անարժէքն արժէքաւոր է դարձրել։ Եւ այդ բոլորը եղել է ոչ այն պատճառաւ, որ նա նոր բաներ էր խօսում, այլ որ խօսում էր մի նոր եղանակաւ՝ «ինչպէս երբէք մի մարդ չէր խօսել»։ — Եւր Յովհաննէս Մկրտչի տեսնելով որ նա իւր սպասածի համեմատ չի շարժում, տարակուսանքի մէջ ընկաւ և մարդիկ ուղարկեց նորա մօտ, հասկանալու համար, թէ ինչ պէտք է մտածել նորա մասին՝ նա երկար ճառեր չասաց, խոր բացատրութիւններ չտուաւ, այլ թողեց, որ դիտեն իրեն, ինչպէս կար, ինչ որ կատարուում էր իւր շուրջը — կայրերը տեսնում են, կաղերքը դրնում... աղբաւանքի ին աւետարան է քարոզուում։

Ահա այդպէս է նա, ուր նորա շունչը կայ՝ ամէն ինչ կենդանանում, զուարթանում, իւր իսկական կերպարանքն է ստանում և սկսում իւր կոչման ծառայել, որովհետև մի անսպառ կենդանութեան աղ-

բիւրից է եղնում՝ այդ շունչը։ Ուրիշները գրից են կենդանութիւն շնչում, նա գրսի աշխարհի համար կենդանութեան շունչ է բերում՝ Իւր ներսից, ուրիշները ձեռք են մեկնում ստանալու համար, նա միայն տալիս է. և երբ նա խօսում է՝ հեռու եզոզներն ականջին նորա խօսքերը հնչում են իրիւհ հին բառերի մի օտարօտի բարդութիւն միայն, ու հիասթափեցնում հեռացնում են նորանից. բայց ով մօտիկ է եղել, այդ բառերը հալուել մինչև հօգու խորքն են թափանցել՝ կամենում է անգադար լսել նորա խօսքը, երբէք չբաժանուել խօսողից։—«Մեր առ ով երթիցուք, բանս կենաց յաւիտենականաց ունիա», ասում էր Պետրոս առաքեալը, և յիրաւի կեանքի խօսքեր էին նորա խօսքերը. ինչ որ խօսողն էր՝ նոյն և նորա խօսքը՝ նա, կարելի է ասել, Իւր էութիւնից, Իւր սրտի գանձից մի մաս դնում էր իւրաքանչիւր խօսքի մէջ. իսկ Իւր էութեամբ համակ սրբութիւն էր նա, և ճշմարտութիւն և բարութիւն, ուստի և նորա խօսքերը սփռիլի բաշխան էին վիրաւոր և ցաւած սրտերի համար՝ անըսպառ դանձ հօգեւոր և մարմնաւոր աղքատութեան մէջ տառապողների համար։ Նոցա առաւելութիւնն ու առանձնայատուկ կողմը հենց այն էր, որ մուրացածոյ իմաստութեան փշրանքներ՝ մի փոփոխական և վաղանցուկ իրականութեան պատկեր չէին, ինչպէս մարդոց բոլոր խօսքերը, այլ ճշմարիտ լուսոյ ճառագայթներ և յաւիտենական իրականութեան սաղմեր, որոնք խորաքննին հոգիների անսահման բարձրութեան մէջ որոնած խորհուրդը պարզում, զգայուն սրտերի խորութեան մէջ երբ և իցէ յուզուած իզձերի ու տենչանաց լրումն էին խոստանում։ Աստուծոյ արքայութիւն է անուանում Ս. Գիրքն այս սքանչելի իրականութիւնը, որ մարգարէների բերանով խոստացուած էր և պէտք է բերէր իւր հետ Տիրոջ օժեալը։ Այդ է պատճառը, որ Փրկչի գրեթէ ամբողջ բարոյութիւնն այդ գաղափարի շուրջն էր դառնում. նորա բոլոր առակները, լերան քարոյրը և ուրիշ աւելի փոքր քարոզներ ու բացատրութիւններ նպատակ ունէին իրերի այդ

նոր կարգը պարզաբանելու, որով իւրաքանչիւր մարդ հրաւիրուում էր մտնալ առ ժամանակ արտաքին աշխարհն իւր խոստացած երջանկութեան պատրանքով, իւր պատճառած հոգսերով ու մտատանջութիւններով, իւր թելադրած ցանկութիւններով ու կրքերով՝ թողնել նաև երևակայական աներեւոյթ զօրութիւնների մասին ունեցած նախապաշարումներն, ու սեփական հօգու մէջ խորատուգուել՝ այնտեղ հարցնել, թէ իւր կեանքի սկզբնապատճառն ո՞վ է և ի՞նչ է պահանջում իրենից, և ճանաչելով ու հպատակելով նորան՝ նորա կամքի համաձայն ուղղել իւր ընթացքը. ապահով լինել ապա, որ սկիզբ դնողը նաև գէպի ուղիղ նպատակ կառաջնորդէ։

Սակայն բանի որ արդէն մի անգամ մենք փորձել ենք «Աստուծոյ արքայութեան գաղափարը» պարզել Արարաւի մէջ,* կրբաւականանանք այստեղ միայն նորա այն կողմի վերայ մատնացոյց անելով, որ սովորաբար վրիպում է Քրիստոսի աւետարանը հարեանցի կերպով քննողի ուշադրութիւնից։ Մանաւանդ մեր մէջ նոր ազդեցութիւնների շնորհիւ աւելի ևս հաստատուել ու ընդհանրացել է այն սխալ միտքը՝ իբր թէ երկնքի արքայութիւնը հանդերձեալ կեանքում սպասած երջանկութեան մի վիճակ է, նման այն երջանկութեան, որին զուր տեղը ձգտում են հասնել մարդիկ այս կեանքում և որը ձեռք բերելու համար պահանջում են նորանից զոհել այս աշխարհի երջանկութեան ցանկութիւնն ու միջոցները։ Այս սխալ ըմբռնումը, որ ինքը Փրկիչն ամէն կերպ մերժել և հերքել է կամեցել՝ գործ է դնում՝ իբրև հիմունք նորա այնպիսի բացատրութիւնները, որոնցով նա ցոյց է տուել, թէ ինչպէս մարգարէների գուշակած վերջնական դատաստանը բոլոր ազգերի համար հեռու ապագայում պէտք է տեղի ունենայ՝ միայն վերին նախախնայմութեան յայտնի մի ժամում, և ապա դորան հետեւ Աստուծոյ իշխանութեան կամ երկնքի թագաւորութեան կատարեալ տի-

* 1896 նոյեմբեր. եր. 491։

բողոքութիւնն ու բացարձակ դորձագրութիւնը տիեզերքի մէջ. մինչդեռ մարդկային կեանքի մէջ նոյն թագաւորութիւնը բոլորովին պարզ և որոշ խօսքերով սկսուած է ներկայացնում նա արդէն այն օրից, երբ կար մէկը, որ Աստուծուն ճանաչում և նորա օրէնքներով էր ղեկավարուում: Իսկ այդ օրէնքների հիմնական կէտն է՝ կատարել ճշմարիտն ու բարին հէնց նորա համար, որ ճշմարիտ և բարի են, որ այդպէս է Աստուծոյ կամբքը, առանց ու է անկախութեան, — խաբուսիկ երջանկութեան փոխարէն նոյն այդ սուրբ կամբքը կատարելու մէջ յախտնական երանութիւն որոնելով: Այն, Գրիստոսի աւետարանը մեզ համար փակ զիրք կ'մնայ, եթէ չկամենանք հասկանալ, որ նա մարդոց բոլոր նախապաշարումները արտաքին մեծութեան, փառքի և ուրախութեան մասին ցրել, ամէն ինչ սրտի և հոգւոյ մէջ կենտրոնացրել, և հասկացնել է կամեցել, թէ իսկական մեծութիւնը մարդու աչքի համար շատ փոքր ու աննշմարելի հոգեկան շարժումներից է սկիզբ առնում, իսկական ուրախութիւնը մարդու սրտից է բխում, իսկական փառքը երկնաւոր թաղաւորի պատուէրները՝ բարոյական պարտքը, կատարելու գիտակցութիւնն է մեզ բերում: Դորա համար նա Աստուծոյ արքայութիւնը մանանեխի հատիկի է նմանեցնում՝ հոգւոյ աղբաւորութիւն և սրտի մաքրութիւն պահանջում՝ նորան ընդունելու համար: Եւ երբ Իւր հայրենի քաղաքում առաջին անգամ հրապարակ ելնելով բաց է անում մարդարեւութեան այն հատուածը, ուր ասած էր. «Հոգի Տեառն ի վերայ իմ վանն որոյ և օծ իսկ զիս, աւետարանել աղբաւորաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սրտիւր... քարոզել զտարեկան Տեառն ընդունելի», — կամենում էր անշուշտ ասել, որ այդ նոր տարեկանը՝ կեանքի այդ նոր շրջանն արդէն սկսուած է, և ամէնքը կարող են այժմեանից նոր երանաւէտ կեանքով ապրել, եթէ իրենց կեանքը՝ իրենց կարծեցեալ հարստութիւնը թողնեն և, ի ներքուստ վերանորոգուելու ու հարստանալու պատրաստակամութեամբ՝ նորան գիմեն, որ աղբաւորին աւետարանելու էր եկել:

Հին ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ.

1901 թուի Հոկտեմբերի 16-ին (ն. տ.) Հալէի համալսարանի Հին Կտակարանի աշտուածաբանութեան հռչակաւոր ուսուցչապետ Էմիլ Կաուչը կարգացել է վերեւ բերած վերաառութեամբ մի դասախօսութիւն, որն այս օրերու տպագրուած լոյս տեսաւ: Մեր նպատակն է համաօտակի, առանձին կարեւորութիւն ունեցող մասերը թարգմանելով, առաջի խիտ հետաքրքրական դասախօսութեան բովանդակութիւնը Վարդապետ ընթերցողներին:

Հին Կտակարանի վրայ յարձակումներն ըսկսուել են քրիստոնէական եկեղեցու մէջ շատ հին ժամանակներից: Արդէն Մարկիոնը, Բ. գարու առաջին կէտում բոլորովին մերժում էր Հին Կտակարանը: Մովսիսական օրէնքի մէջ յայտնուած Աստուծուն բոլորովին այլ, աւելի ստորաստիճանի վրայ գտնուող՝ Աստուած համարելով, քան թէ Գրիստոսի մեջ յայտնագործուածը: Կրօնական յեղափոխութեան ժամանակ էլ նոյն խնդիրը մեծ զեբ էր կատարում այսպէս կոչուած «աղիւս օրինական» մէջ: Կանտը նման մեծ փիլիսոփան նոյն խնդիրը հետեւելով իւր ժամանակի սխալ հասկացողութեան, օրէնքի մէջ էր տեսնում Հին Կտակարանի կրօնի հիմքն ու ծուծը, այդ պատճառով էլ բացարձակօրէն մերժում էր մանաւանդ որ Հին Կտակարանի մէջ չէր գտնում մի հատուցման վարդապետութիւն հանդերձեալ կեանքի համար: Մինչև անգամ Շլայերմախերը, չ'նայելով իւր խոր ըմբռնման, չ'կարողացաւ անայառ վերաբերուել դէպի Հին Կտակարանը և յայտարարեց այն իբրեւ երկրորդական, և մինչև իսկ աւելորդ, մի հեղինակութիւն քրիստոնէութեան համար:

Այս բոլոր մերժումներն ունին սակայն տեսական, մասամբ նաեւ կրօնական՝ հիմունքներ: Բոլորովին այլ տեսակի են այն յարձակումները, որ կրեց Հին Կտակարանը նոր և նորագոյն ժամանակներում. այստեղ խօսքը ոչ թէ Հին Կտակարանն աւելի ստոր ստիճանի վրայ գնելու մասին է, քան թէ նորը, այլ բացարձակ կերպով արտաքսելուն՝ թէ եկեղեցուց և թէ դպրոցից: — Գոյա հաշուում չէ ի հարկէ Հեքէլի «Աշխարհի առեղծուածի» (Welträtsel) 17-րդ գլուխը, որ միայն իւր հեղինակի վրայուն ազդեցութիւնն է ապացուցանում, որ ինչ ոչինչ, իւրաքանչիւր վրեժ իշատէ գեղարուեստական ճաշակ ունեցող ընթերցողի զգուանքը միայն կարող է բաժին լինել այդ տեսակ «զիտութեան»:

Սոցիալ—Գեմստիկականներն ևս, Հին Կտակարանը համարելով ներկայ ընկերական կազմակեր-